Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
9-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Բյուրական գնալու ճանապարհին՝ քո դիմաց՝ հանդիպակաց ***բարձունքին*** վեր է խոյանում հինավուրց մի ամրոց, որ ասես սիգապանծ հայացքով դիտում է շրջակայքը: Ամբերդն է՝ հայ ճարտարվեստի գլուխգործոցներից մեկը. բերդաքաղաքը կառուցվել է այնտեղ, որտեղ միանում են Արքաշեն և Ամբերդ գետերը: Այն ունի խաչաձև հատակագիծ, վերևում հովհարաձև ***տանիք:*** Դարպասից ներս մտնելիս՝ երևում են շինություններ իրենց սենյակներով՝ յուրաքանչյուրն իր բաղնիքով, և ընդհատակյա ջեռուցման համակարգով:

Առեղծված է դարերի հոլովույթի մեջ բարձրադիր այս ***կառույցի***՝ մինչ օրս կանգուն լինելը:

Պեղումներից հայտնաբերվել են գետնուղիներ, որոնցով ամրոցի բնակիչները դուրս են եկել դեպի մոտակա կիրճը:

Ամբերդը ժամանակին ռազմական կարևոր ***հենակետ*** էր: Երբ տասնմեկերորդ դարում սելջուկները գրավեցին բերդաքաղաքը, այն վերածվեց զորակայանի, իսկ կառույցն ամբողջովին ավերակվեց Լենկթեմուրի կողմից, ով աշխարհին հայտնի է իր չար գործերով:

Ճիշտ է, այսօր էլ կանգնած է Ամբերդը՝ գլուխը մխրճած ամպերի մեջ և ներքևից ***նայողին*** թվում է, թե մշուշի մեջ կորած մտացածին տեսիլք է իր առջև, սակայն երբեմնի աշխույժ կյանքով ապրող ամրոցում, ցավոք, այժմ լսվում է միայն բուերի կռինչը:

1. Արտագրի՛ր տեքստը՝ շտկելով թույլ տրված կետադրական սխալները, և անհրաժեշտ տեղերում լրացրո՛ւ բաց թողնված տրոհության նշանները:
2. Շարահյուսորեն վերլուծի՛ր տեքստում ընդգծված անդամները:
3. Տեքստից դո՛ւրս գրիր 4 տարբեր դերբայներով կազմված դերբայական մեկական դարձված՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը:
4. Տեքստից դո՛ւրս գրիր հարաբերական դերանունները՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը:
5. Տրված բառերից առանձնացրո՛ւ կազմությամբ բարդածանցավոր բառերը՝ նշելով արմատը՝ մեկ, ածանցը՝ երկու գծով. *տասնմեկերորդ, հոլովույթ, շրջակայք, առեղծված, հինավուրց, մտացածին, հատակագիծ, հովհարաձև, արևելյան, զորակայան, գլուխգործոց, ընդհատակյա:*
6. Մեկնաբանի՛ր տրված դարձվածքները մեկ բառով. *բուրդը քամուն տալ, կուրծք ծեծել, առյուծ կտրել, բառերը քամուն տալ, կոտր ընկնել:*
7. Գրի՛ր տրված բառերի հոմանիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ. *խոչակ, կերոն, հեղգ, շաղակրատել, մավի:*
8. Գրի՛ր տրված բառերի հականիշները. *թեթևասահ, կորովի, մտացածին, թեժ, վեհանձն:*
9. Գրի՛ր շարադրություն՝ «Գրավի՛ր բարձունքը» վերնագրով (առնվազն երկու էջի սահմաններում: